

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ, Վիժակաճ արձանագրությունների ճնշյունաբանություն
(X—XIV դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1973, 375 էջ

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության համար բազմաթիվ ու բազմապիսի գրավոր աղբյուրների մեջ իրենց ուրույն տեղն ունեն վիժակաճ արձանագրությունները, որոնք, որպես լեզվի պատմության սկզբնաղբյուրներ, ունեն որոշակի առավելություններ:

Փորագրված լինելով պատմական հուշարձանների կամ նրանց կից կառույցների, ինչպես նաև խաչքարերի ու տապանաքարերի վրա, վիժակաճ արձանագրությունները մեղ հասել են առանց ընդօրինակությունների՝ իրենց նախնական վիճակով և այս իսկ տեսակետից էլ հավասարի ու վստահելի աղբյուրներ են տվյալ ժամանակի լեզվի ուսումնասիրության առումով:

Լեզվի պատմության համար չափազանց կարևոր է հնչյունաբանական փոփոխությունների առաջացման բացարձակ կամ հարարևական ժամանակների որոշումը: Այդ բանը թեև շատ դժվար, բայց հնարավոր է անել ուսումնասիրվող երևույթների առաջին վկայությունների միջոցով, երբ օգտագործվող սկզբնաղբյուրի դրույթն կամ դրույթյան աարևթվերը հայտնի են: Այս տեսակետից ես վիժակաճ արձանագրությունները ունեն առավելություն:

Վիժակաճ արձանագրությունները գրավոր այլ աղբյուրների համեմատությամբ ունեն նաև մի այլ առավելություն: Դա այն է, որ նրանք առավել, քան որևէ մի այլ գրավոր սկզբնաղբյուր, տեղայնացված են: Այլ կերպ ասած, եթե թղթի կամ մագաղաթի վրա ավանդված տեքստերի գրչության վայրերը շատ անգամ անհայտ են և դրանց որոշումը ուսումնասիրողից շատ ճիգ ու ջանք է պահանջում, ապա վիժակաճ արձանագրությունների գրչության վայրերը առանց որևէ հիշատակության էլ հայտնի են և նրանցում արտահայտված լեզվական համակարգը արտացոլում է հենց այն հայերենը, որտեղ նրանք գրվել ու պահպանվել են:

Այսպիսով, արձանագրություններն իրենց հավաստիությամբ, տեղի և ժամանակի վավերականությամբ ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծում ժամանակի ու տարածության մեջ հետևյալ: Լեզվական ձևերի փոփոխությունների ընթացքին, քան գրավոր այլ սկզբնաղբյուրներ: Հատկապես մեծ է նրանց արժեքը միջնադարյան հայ բարբառների առանձնահատկությունների բացահայտման գործում: Դրախոսվող աշխատությունը առաջին հերթին պետք է գնահատել այս տեսակետից:

Անշուշտ, մինչև Ս. Ավագյանի աշխատության հրապարակ դալը հայոց լեզվի պատմության առանձին շարքերի կամ ամբողջական շարադրանքների մեջ այս կամ այն չափով օգտագործվել է վիժակաճ արձանագրությունների լեզվական նյութը: Դրանց ըննությամբ առավել մեծ տեղ է հատկացված հատկապես Վեհարկաճ միջին գրական հայերենի պատմության աշխատության և Հնչյունաբանություն և Քառագիտություն բաժիններում: Ս. Ավագյանի աշխատությամբ առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դառնում միայն վիժակաճ արձանագրությունները: Հեղինակը քաջ գիտակցել է արձանագրությունների ուսումնասիրության հետ կապված դժվարությունները և որոշակի քննադատական վերաբերմունք ցուցաբերելով դրանց նկատմամբ, իր ուսումնասիրության ոլորտի մեջ է առել միայն լեզվական այն նյութը, որը հավաստի է, ճշտված և բնագրի հետ նույնական: Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի արշավախմբերի կազմում շրջելով Հայաստանի պատմական վայրերում, տեղում անձամբ ծանոթանալով պահպանված արձանագրություններին, նա ստուգել է մի շարք արձանագրությունների բնագրերը, վերծանել ու գրի է առել գիտությանն անհայտ նոր արձանագրություններ, կազմել իր անսխիպ հավաքածուն և դրանից օգտվել իր աշխատության մեջ: Հրատարակված վիժարձանագրությունների բովանդակության ըննությամբ և դրանց լեզվական նյութի համեմատությամբ Ս. Ավագյանը առաջարկել է բառերի ու բառակապակցությունների առավել ստույգ վերծանություններ, բառանշատմաների ու փակագրությունների հավաստի բացումներ, բաղմաստի ճշտումներ, բառերի նոր ստուգաբանություններ և այլն: Բնագրագիտական ու բանասիրական այս տեքստային աշխատանքով ուսումնասիրության մեջ օգտագործվող լեզվական նյութի հավաստիությունը մեծացել է:

Ներածության մեջ հեղինակը մանրամասնորեն նկարագրում է վիժական արձանագրության ներքին գրառման ու հավաքման, ինչպես նաև տարբեր ժամանակներում դրանց վերծանման ու ընդօրինակման ընթացքում հանդես բերած տարբեր մոտեցումները, գնահատում ու արժեքավորում է արձանագրությունները հավաքող, վերծանող ու հրատարակող բանասերների ու գիտնականների աշխատանքը, հիմնավորում հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հասարակ վիժարձանագրությունների կարևորությունը և արժեքը, տալիս դրանց լեզվաբանական ուսումնասիրության արդի վիճակն ու անելիքները:

Բուն նյութի, այն է՝ X—XIV դդ. վիժական արձանագրությունների հնչյունական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, կատարվում է գրքի չորս գլուխներում, որոնք համապատասխանաբար նվիրված են ձայնավորների, երկբարբառների, բաղաձայնների և հնչյունափոխական այլ երևույթների քննությանը:

Վիժական արձանագրություններում արտացոլված հնչյունափոխական երևույթների բացահայտման համար հեղինակը համեմատության եղբ է ընտրում դասական հայերենի բառաձևերն ու ուղղագրական նորմաները, ինչպես նաև ուսումնասիրվող շրջանում այլ լեզուներից հայերենին անցած բասերի տառադարձված ձևերը: Այս եղբերը հիմք ընդունելով՝ քննվում են հնչյունափոխական այն երևույթները, որոնք երևան են դալիս ձայնավորների, հին երկբարբառների, բաղաձայնների ուղղագրական շեղումներում: Փոխառյալ բառերի հայերեն ձևերի համեմատությունը փոխատու լեզվի սկզբնաձևերի հետ հեղինակին հնարավորություն է տալիս որոշելու արձանագրությունների հիմքում ընկած բաղաձայնական համակարգը: Ձայնավորների ու երկբարբառների հնչյունափոխությունը նկարագրելիս Ս. Ավագյանը դիմում է նաև ժամանակակից հայ բարբառների համապատասխան վկայակոչումներին:

Աշխատությունը իր թեմատիկ բնույթով լինելով առաջինը՝ հազեցված է հարուստ փաստական նյութով և լրացնում է միջին հայերենի ուսումնասիրության բնագավառի այն բացը, որ պայմանավորված էր արձանագրությունների բիշ օգտագործմամբ: Չնայած գրքում նկարագրված հնչյունափոխական երևույթները մեծ մասամբ գիտությանը հայտնի են միջին հայերենին նվիրված աշխատություններից, սակայն արձանագրություններն ունեն հնչյունափոխական այնպիսի առանձնահատկություններ, որոնք հիմնականում կենդանի են այսօրվա արևելահայ բարբառներում: Արձանագրությունների այս բնույթը, անշուշտ, պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք հիմնականում վկայված են արևելյան և հյուսիսային Հայաստանի պատմական հուշարձաններում: Ինչպես պարզվում է հեղինակի բերած բազմաթիվ օրինակներից, վիժարձանագրությունների հիմքում ընկած բաղաձայնական համակարգը առավելապես անտեղաշարժ նոստիճան է (թեև նկատելի են նաև այլ համակարգերի ներթափանցումներ), որը հատուկ է արևելահայ բարբառներին: Սա արմատապես (պատմական զարգացմամբ) տարբերվում է կիլիկյան համակարգից, որը հայտնի է պայթական ու պայթափական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությամբ: Ձայնավորների և երկբարբառների փոփոխությունների մեջ ևս, ընդհանուր հայերենյան օրինաչափություններին զուգահեռ, արձանագրվում են նաև այնպիսի անցումներ, որոնք առավելապես հատուկ են արևելահայ մի շարք բարբառներին:

Թեև գրախոսվող աշխատության վերնագրում արձանագրությունների ուսումնասիրությունը սահմանափակված է X—XIV դդ., սակայն Ս. Ավագյանը քննում է նաև X դ. առաջ վկայված արձանագրությունները, որով և բազմիցս ուրվագծում է հնչյունափոխական մի շարք երևույթներ վաղ սկզբնավորումը:

Արժեքավոր է աշխատության վերջում զետեղված ժամանակագրական տախտակը, որտեղ ամփոփված են վիժական բնագրերում ավանդված հնչյունափոխական երևույթների հնագույն վկայությունները: Այստեղ նախ տրվում են հնչյունափոխական երևույթները, ապա դրանց վկայության վայրն ու ժամանակը, այնուհետև բերվում են օրինակներ և նշվում վերծանության աղբյուրները:

Աշխատության մեջ կան մի շարք հնչյունափոխական երևույթների ոչ ճիշտ մեկնաբանություններ (ով>ու և այլն), որոնք, իհարկե, կարող էին և չլինել: Բայց սրանք չեն, որ արժեքավորում են Ս. Ավագյանի աշխատությունը:

Վիժական արձանագրությունների հնչյունական առանձնահատկությունների մի այնպիսի մանրամասն ուսումնասիրություն, որ կատարվում է առաջին անգամ այս աշխատության մեջ, մեծ նպաստ է ինչպես միջին հայերենի, այնպես էլ, առհասարակ, հայերենի պատմական ուսումնասիրության համար:

Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բաճախական գիտությունների դոկտոր